Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Учредительный
Съезд

1905

491·99·8
Ц·82

1934

1905. № 2752.

ՅՈՎՀ. ԱՐԱՐԱՏՅԵԱՆ

125

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Библиотека Института Востоковедения Российской Академии Наук

(Պատկերներով, գրութեան օրինակներով, գրաւոր վարժութիւններով եւ շարժական այբուբենով)

Одобрена Попечительскимъ Совѣтомъ Кавказскаго Учебнаго Округа для употребленія въ начальныхъ училищахъ.

ԳԻՆԸ 25 ԿՈՊԵԿ

Հիգիերարդ տպագրութիւն

ПЕЧАТЬ АЗІАТСКАГО МУЗЕУМА. С.П.БУРГЪ. АЗІАТ. С. А. 1918.

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Տպարան Յակոբ Դասապետեանցի
1905

491.99-8
Ա-82

191-99-8
Ч-82
04 MAY 2010

ՇԱՐԺԱԿԱՆ ԱԲԲՈՒԲԵՆ

Կպցնել ստուարաթղթի (կարտոնի) և կտրատել։

ս	ա	ա	ր	մ	տ	տ
դ	շ	շ	ի	գ	ե	ե
ո	կ	ն	ը	ց	ց	է
ւ	եւ	ու	զ	բ	դ	լ
զ	օ	ժ	թ	ռ	ծ	ճ
ճ	պ	հ	ջ	վ	ձ	խ
փ	ք	ֆ	յ	այ	ոյ	իւ

ՀԱՅԿ-ԱՄՍ ՍՍՌ
20 FEB 2013

С арт-к
3511
491.99-8
Ա-82

ՄՈՎՍ. ԱՐԱՐԱՏՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

(Պատկերներով, գրաբարի օրինակներով, գրաւոր վարժութիւններով եւ հարցական այբուբենով)

Одобрена Попечительскимъ Совѣтомъ Кавказскаго Учебнаго Округа для употребленія въ начальныхъ училищахъ.

ԳԻՆԸ 25 ԿՈՊԵԿ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՕՊԱԳՐԱՏԻՊԻՆ

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Տպարան Յակոբ Ղասապեանցի
1905

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ЯЗЫКОЗНАНИЯ
Академии Наук
СССР

Дозволено цензурою, 9-го іюня 1905 года, г. Тифлисъ.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

(2-րդ տպագրութեան)

Մեր կազմած «Մայրենի Լեզուն» հրատարակում ենք երկրորդ տպագրութեամբ՝ այն փոփոխութիւններով, որոնք ցոյց են տրուած Կովկասի Ուսումնարանական Շրջանի Հոգաբարձական Խորհրդից։ Բացի այդ՝ այս տպագրութեան մէջ աւելացրել ենք՝ ա. մասում—գրութեան օրինակներ, իսկ բ. մասում—մի քանի յօդուածներ եւ նիւթեր գրաւոր աշխատութիւնների համար։

Հնայելով, որ յիշեալ յաւելումների շնորհիւ տպագրութեան ծախսերը կրկնապատկւում են եւ գրքի ծաւալը մեծանում է, այնուամենայնիւ մենք նրա գինը պակասեցնում ենք, որպէսզի այդ կողմից բոլորի համար էլ մեր «Մայրենի Լեզուն» մատչելի լինի։

ԱԲԲԵՆԱՐԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

1. Իւրաքանչիւր դասի սկզբում մի պատկեր իւր անունով, որի օգնութեամբ մանուկները հեշտութեամբ կ'իմանան, թէ ինչպէս է կարդացւում անծանօթ տառը։

---

2. Նոր տառով բառեր (վանկերի բաժանած)՝ կարդալու և գրելու համար։

---

3. Փոքրիկ նախադասութիւններ և հայկական դիւրըմբռնելի առածներ (վանկերով և առանց վանկերի)՝ կապակցական ընթերցանութեան համար։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱԲԲԵՆԱՐԱՆ

1.



սար ս, ա, ր, սար.

ս ա. ս ա ր. ա - ս ա. ա - ր ա։

2.



մատ մ, ա, մատ.

Մաս. տաս. տար. արտ. տամ. ա-տամ. Ա-բամ։

3.



մաղ մաղ.

Աղ. մաղ. տաղ. ա-բաղ. տա-բաղ։—Ա-բամ, տաղ ա-սա։

4.



տաշտ տաշտ.

Ծաշտ. շատ. շա-մամ։—Ար-շամ, շա-մամ տաս։

5.

շիշ շիշ.

Իմ. մի. միս. տա-բի. մա-տիտ։—Մա-բի-ամ, ա-բի, մաղ տամ։

6.

սագ սագ.

Սա. սագ. գա-բի. Մագ-տաղ։— Մար-գար, ա-բի, գա-բի տամ։ Սարգիս, շամամ տար։

7.

Ե-ԵՍ Ե, Եսա

Ես. եղ. տեղ. ա-սեղ. ա-ղեղ։—Մարիամ, երգ երգիր։ Ես մի երգ գիտեմ։

8.



ՈՍՈ Ո, ոսր.

Որ. որս. որ-տեղ. չոր. գող. Ճո-ղեր։—Մար-գարիտ, որ-տեղ եր։ Գրիգոր, չոր տար։ Սարգիս, արի, որսի միս տամ։

9.



ԿԱՐ Կ, կար

Կեր. կա-բաս. եր-կար. ոս-կի։—Աստ-ղիկ, չոր կա-ռիր։ Մակար, մատաղ արա։ Կատար, մի երգ երգե՞ս։

10.



ՆԱ-ՄԱԿ Ն, նամակ.

Նա. նան. Ան-նա. գի-նի. մա-տա-նի։—Ես մեր-նակ եմ։ Նանի, կարագ տա՞ս։ Ճողիկ, տատին նամակ տար։ Մանիկ, աղ մաղիր։

11.

10

տա-ար Ե, տաՐ

Ըն-կեր. ըն-տիր. ըն-տա-նի. մա ղը. կա-բա-սը։— Ար-շա-կը գի-նի կը-տա-նի։ Աստղիկ, իմ ընկեր Սի-սա-կին որ կը տեսնես, արի, ասա։

12.



ցանց Ց, ցանց

Գրի-գո-ը ցո-րեն ցա-նեց։ Ա-շա-կեր-տը նա-մակ գը-րեց։ Իմ ընկերը սարը գնաց։ Մացակը կացինը սեղանի տակ գցեց։

13.

էշ Է, էշ

Կա-րի-նէն մեր տա-նը է։ Գէ-որ-գը իմ ըն-կե-ը է։ Իմ գեղեցիկ մատանին մատիս է։ Սրոցը սեղանի տակին է։ Մեր սագը շատ գեղեցիկ է։

14.



նաւ Ն, նաւ

Նա-ւա-կը գետի ե-բե-սին է: Կաւից ա-ման-ներ շի-նե-ցին: Եսաւը որսի գնաց: Նաւատէրը նոր նաւ գնեց:

եւ—և

տե-ւեւ

Սև. ա-ւև. կե-ղև:—Ձողիկը և Սատղիկը: Արամը և Գեղամը ընկերներ են: Գետնին շատ տերևներ կան: Եղևնին գեղեցիկ է:

15.

կա-տու

Ձու-նը շա-նից, եր-կու-սը մի տա-նից: Ձու-նըն ու

կատ-ուն ի-րար միս են ու-տում: Արշակը մեր ուրագը կորցրեց: Ուսումնարանում մանուկները գրում են:

16.



դա-նակ

Ուղ-տըն ըն-տա-նի կեն-դա-նի է: Մեր դրացին դա-նակ գը-նեց: Դուրը դարակումն է: Գող, սիրտը դող: Մեր դրացու որդին իր դասը գիտէ:

17.



բադ

Բա-դա-բաս, բամ-բակ գը-նիր, տա-տին տար:

Բամ-բա-կը դաշ-տու-մըն է բուս-նում: Մանուկ, միշտ բարի եղիր: Բարի մարդկանց ամենը սիրում են: Բաղը գետում գորտ է որսում:

18.

հաւ հ, հաւ

Աղ ու հաց, սիր-տը բաց: Դար-բի-նը բահ է շի-նում: Դանակը ոսկորին մի՛ հասցնիր: Համբերող եղիր: Հեղինէն համեստ է:

19.



բալ բ, բալ.

Լու-սի-նը լու-սա-ւո-րում է երկիրը: Սա-գե-ը լո-զում են գե-տի ե-րե-սին: Լաւ տղան ընկերից կ'երևի: Մի՛ ասիր, մի՛ լսիր: Լորը արտերումն է շինում իր բունը:

20.

զանգ զ, զանգ.

Ոգ-նին կեն-դա-նի է: Լե-զուն դա-նա-կից սուր է: Զա-բուհու մազերը շատ երկար են: Բզէզը բզզում է: Բա-զէն հաւ տարաւ: Գազանները սարերումն են բնակւում:

21.



օ-ղակ օ, օղակ.

Սև օ-ին էլ սև շոր է հար-կաւ-որ: Մօ-տիկ հա-բե-ւա-նը բա-բե-կա-մից լաւ է: Մահը մէկ օր, լացը մէկ օր: Իմ հօր կօշիկները օրօրոցի տակն են:

22.



ժամ

Ժա-մա-սէր մար-դիկ ժամ են գը-նում։ Բը-ժիշ-կը հի-ւան-դին դեղ է տա-լիս։ Ժամանակը ոսկի է։ Բաժակ սեղանին է։ Գժի համար ամեն օր նոր տարի է։

23.



թաս

Բա-դի թա-թը կար-միր է։ Թե-լը որ բա-բա-կեց, կը-կըտ-րի։ Թող սև լինի, շատ լինի։ Մեր թասը դա-տարկ է։ Զողակաթը կաթ բերեց մեզ։ Թանը թթու է։ Ուրբաթ օրը տօն է։

24.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ЯЗЫКОЗНАНИЯ
Академии Наук
СССР

բեռ

Ագ-ռա-ւը կըռ-կը-ռում է։ Ռու-բէ-նը մա-ռա-նից գա-ռի միս է բե-րում։ Գառը զարնանը կըլինի։ Ես շատ ռուսերէն բառեր գիտեմ։ Գնա մեռիր, արի սիրեմ։ Դանակը ոսկուին է հասել։

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀԱՅ-Арм ССР
ԱԿ. ՍՍՀՄ Գ. Մ. Ա. Մեսրոպի անվան

25.

ծառ

Ծ, ծառ.

Կար-կու-տը ծե-ծած տե-ղը կը-ծե-ծէ։ Ծե-բա-նաս, ծե-բի հա-լը ի-մա-նաս։ Ծիծեռնակը գարնանը կ'երևի։ Ղեզուն ածելուց սուր է։ Ամեն ծաղիկ իր հոտն ունի։ Հացը դրած, բանն անիծած։

26.

ճանճ

Ճ, ճանճ.

Ճա-հի-ճում շատ ճի-ճու-ներ կան։ Ճա-դա-րը սի-րուն կեն-դա-նի է։ Ճրաքը գիշերն է հարկաւոր։ Սաթենիկը ճաշ է անում։ Եղբօրս ճակատը շատ կնճիռներ ունի։

27.

պար-տէզ

Պ, պարտէզ.

Պա-պը պար-կած է պար-տի-զում։ Պաս ու-տեմ պաս, էն էլ թա-նէ սը-պանս։ Նապաստակն ու ճագարը մի ցեղից են։ Մեր եզը երկար պոզեր ունի։ Հաց ու պանիր, կեր ու բանիր։

28.



գրիչ

Գ, գրիչ.

Գան հա-չա-լուն մի հա-ւա-տալ։ Գու-նը շան մը-սից չի ու-տիլ։ Գար մանուկները չարչարում են ճանճերին։

Միսն առանց ոսկու չի լինիլ։ Ինչ կ'ասես, էն կըլսես։ Ուրազն իր կոթը չի տաշիլ։

29.

Ջու-թակ

Ջ, ջու-թակ.

Ջը-րի բե-րա-ծը ջու-ը կը-տա-նի։ Ջը-ր-հո-ր-ից մարդիկ ջուր են հա-նում։ Կուժը ջրի ճամպին կըկոտրի։ Արջը զարհուրելի գազան է։ Ջրաղացում մարդիկ հացա-հատիկ են աղում։ Անջուր ջրաղաց, անկրակ բաղարջ։

30.

Վարդ

Վ, վարդ.

Վագ-ը վի-րա-տո-ր-ից որ-սոր-դին։ Վարդը շատ հոտաւէտ է։ Ուղտին գդալով չեն ջրիլ։ Ձունը կաղալով չի սատկիլ։ Մէկ ծաղկով գարուն չի գալ։

31.

Ձի

Ձ, ձի.

Ձրկ-նոր-սը ցան-ցով ձուկ է որսում, Կար-միր ձուն Ձատ-կին կը-սա-զի։ Ինչ որ ցանես, էն կըհնձես, էշը ղատի, ձին ուտէ։ Անուշ լեզուն օձը ծակից կըհանէ։

32.



Խոզ

Խ, խոզ.

Խո-զը չա-տս-կեը կեն-դա-նի է։ Մե-ղբը ծա-խո-ղը մա-տը կը-լի-զէ։ Ձուկը գլխից կրհոտի։ Խնին խրատը, սևին սապոնը ի՞նչ անէ։ Ինչ կրբրդես, էն կրխրթես։

33.



փիղ փ, փիղ

Փղա-պա-նը [փո-ղո-ցով փիղ է ման ա-ծում։ Մե-ղունները փեթակում մեղր են շինում։ Վարդն առանց փշի չի լինի։ Վարդը վերցրու, փշին կրակ տուր։

34.

քիթ ք, քիթ

Տա-շած քա-րը գետ-նին չի մը-նալ։ Մենք աչքով տես-նում ենք։ Քամու բերածը քամին կրտանի։ Օձն առաջ իրան տաքացնողին կրկծի։ Ձիտակ խօսքը հա-նաքի միջով կ՚ասեն։ Քիչ բարձիր, շուտ դարձիր։ Երկա-թը տաք-տաք կրծեծեն։

35.



ֆուր-գօն ֆ, ֆուրգօն

Ֆուր-գօ-նով ապ-րանք են կը-րում։ Թուր-քե-րը ֆէս են ծած-կում։ Նունուֆարը գեղեցիկ ծաղիկ է։ Ֆառաշով աղը են հաւաքում։ Օձը ֆըշշում է։ Փղին ֆիլ էլ են ասում։ Գնչուհին ֆալ է բաց անում։

36.

յո-վազ յ, յովազ

I.

Յու-նի-սին մենք յար-մար բնա-կա-բան կը-գըտ-նենք։ Յուլիսին եղանակն անտանելի է դառնում։ Յոպոպն ինքն է հոտած, հէնց գիտէ՝ բունն է հոտած։

II.

այծ

Հայրս մի գայլի ձագ բռնեց։ Ատծու պահած գառը գայլը չի ուտիլ։ Որտեղ հաց, այնտեղ կաց։ Մայրս ու եղբայրս այգի գնացին։

III.

Նա հայ է։ Վա՜յ ձեզ։ Եղբայրս այսօր թէյ չ՚ունի։ Ձայը ճահճային թռչուն է։ Օ՜յ, ինչ շոգ եղանակ է։ Հէ՜յ, բարեկամ, այդ ո՞ւր ես գնում։

IV.

Մ՚ինչև տղան չլայ, մայրը նրան ծիծ չի տայ։ Ջուրն ընկնողը անձրևից չի վախենայ։ Ջուրը չտեսած մի բոբիկանայ։ Ով որ խաղայ, նա կըկաղայ։ Գայլն ամպ օրը կ՚ուրախանայ։ Այսօր մի քահանայ տեսայ։ Բանդ արա՛, յետոյ խաղա՛։

V.

ժա-մա-ցույց

Ժամագործը ժամացույց է շինում։ Մի ծաղկից օձը թույն է շինում, ճանճը — մեղր։ Մակույկով լողում են գետի երեսին։ Ծառը բույս է։ Ծույլ աշակերտը պատժի արժանի է։ Քույրս Սրշալույսին նամակ է գրում,

37.

I.

առիւծ

Գիւրակի օրը իւղալի կերակուր կերանք։ Հիւրն եկաւ, հիւրը գնաց, տեղը դատարկ չմնաց։ Աղբիւրի մօտ մեծ բազմութիւն կայ։ Աշակերտը իւր դասն է սովորում։

II

արծիւ

Փոքրերը պէտք է պատիւ տան մեծերին։ Փողերիդ հաշիւը գիտցիր։ Մեր դրացու տունը սուգ ու շիւան կայ։ Հիւանդը որ գնալու լինի, մատաղը չի օգնի։ Ծերանաս, ծերի պատիւը կ'իմանաս։

38.

եա. եօ.

Համբերութիւնը կեանք է։ Եօթը ծովից, մէկ կովից։ Կարծեօք սենեակում մարդ կայ։ Արդեօք ե՞րբ պէտք է երկինքը պարզէ և լուսնեակը դուրս գայ։ Յիսուս Քրիստոս եօթանասուն երկու աշակերտ ունէր։

39.

աղուէս

Աղուէսը խորամանկ կենդանի է։ Ձուի գողը ձիու գող կը դառնայ։ Ձմեռուայ վարդը կրակն է։ Ամառուայ փուշը, ձմեռուայ նուշն է։ Կատուին խաղ է, մկանը մահ է։ Գետինը ձիւնով ծածկուեց։ Այսօրուայ գործը վաղուան մի թողնիր։

40.

Զգալ—լզգալ։ Ճտապել—ըշտապել։ Սկսել—ըսկսել։ Ստանալ—ըստանալ։ Սպիտակ—ըսպիտակ։

Սկզբում Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը։ Սպունգը ծովից են հանում։ Սպիտակ շունը բամբակ ծախողին վնաս է։ Ճտապողին չի յաջողուիլ։ Սկիւռը թռչկոտում է ծառից ծառ։ Ցուրտն արդէն զգալի է։ Երեխաներն զբօսնում են պարտիզում։ Զգոյշ կացէք, փորձութեան մէջ չընկնէք։

ՀԱՅԵՐԷՆ ԱՅԲՈՒԲԵՆԸ։

ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, ք, և, օ, ֆ։

ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, ք, և, օ, ֆ։

ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, ք, եւ, օ, ֆ։

Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ, Ի, Լ, Խ, Ծ, Կ, Հ, Ձ, Ղ, Ճ, Մ, Յ, Ն, Շ, Ո, Չ, Պ, Ջ, Ռ, Ս, Վ, Տ, Ր, Ց, Ւ, Փ, Ք, Օ, Ֆ։

ՀԱՅԵՐԷՆ ԳՐԱՊԻՐ ԱԲԲՈՒԲԵՆԸ



ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ԱԲԲՈՒԲԵՆԻՑ ԵՎՏՈՒ.

1. ԱՌԱՒՕՏ

Լուսացաւ, լուսացաւ, լոյսն է բարին, ծիտն է ծառին, հաւն է թառին։ Աշխատաւոր, վեր կաց բանի. ծոյլ տղայի քունը կըտանի։

2. ԱՔԱՂԱՂ

Գու ինձ ասա, աքաղաղ, ոսկէ կատարիդ մատաղ, կարմիր մօրուքիդ մատաղ. ինչու ես չուտ արթնանում, բարձրը-բարձր երգ ասում, քաղցը քունս խանգարում։

3. ՔԱՋ ՁՈՒՆ

—Ընիկ, ինչու՞ ես հաչում։
—Գայլերին եմ վախեցնում։
—Ընիկ, ինչու՞ պոչդ քեզ քաշեցիր։
—Գայլերից եմ վախենում։



4. ԲԱՐԻ ՁՈՒՆ

Ձունը պահպանում էր իւր տիրոջ տունը։ Նա տեսաւ մի աղքատ մարդու և սկսեց նրա վրայ հաչել։

—Սիրելիս,— խնդրեց աղքատը,— խղճա՛ ինձ. ահա երեք օր է, որ ոչինչ չեմ կերել։

—Ես էլ նրա համար եմ հաչում,—պատասխանեց շունը,—որ մարդիկ լսեն ձայնս և քեզ կերակրեն։



5. ԾԻՏԸ ԵՒ ԲԱԶԷՆ

Ծիտը ծառին ծլվլում է՝
Ծի՛ւ, ծի՛ւ, ծի՛ւ։
Բազէն գլխին պտտւում է,
Վա՛յ, վա՛յ, վա՛յ։
Ծիտը լռեց, ծիտը վախեց,
Վա՛յ, վա՛յ, վա՛յ։

Բազէ՛, թը՛ռռ, բազէ՛, թը՛ռռ,
Հա՛յ, հա՛յ, հա՛յ։
Բազէն թռաւ,
Բազէն փախաւ,
Ի՞նչ լաւ եղաւ,
Հէ՛յ, հէ՛յ, հէ՛յ։

Ծիտիկ-միտիկ, պիծիկ-միծիկ,
Պրտպրտուրիկ, չրլպրտուրիկ,
Դու լաւ պրծար չար բազէի
Սուր ճանկերից, հա՛, հա՛, հա՛։

6. ԿԱՏՈՒՆ ՈՒ ՁՈՒՆԸ

Որսկան շունը մի նապաստակ էր բռնել։ Կատուն այդ որ տեսաւ, շանը նախատեց ու ասաց. „Ի՞նչ անգուլթն ես“։ Հէնց այդ րոպէին մի փոքրիկ մուկը ծակից դուրս եկաւ և վազելով անցաւ նրանց առաջից։ Կատուն վրայ հասաւ, բռնեց ու կերաւ։ Ձունն ասաց.

—Այդ ի՞նչ ես անում։ Դու ինձ նախատում ես, որ ես մի նապաստակ եմ բռնել իմ տիրոջ համար, իսկ ինքդ մուկն ես բռնում ու անուշ անում։

—Է՞հ, ոչինչ, իմ կերածը մի չնչին մուկն է,—պատասխանեց կատուն։

Քո աչքի գերանը թողած, ուրիշի աչքի շիւղն ես պտրում։

---

7. ԿԱՏՈՒ

Կատուն եկաւ, փիսի՞կ-փիսի՞կ,
Հազար նազով՝ ինչպէս հարսիկ.
Դունչը սրբեց թաթիկներով,
Մազը սանրեց չանչիկներով։
—Կատու, կատու, ի՞ր ես տրտում.
Թէ՞ մկներն են այսօր արթուն։

---

8. ԴԵՂ

Փոքրիկ Աննայի մայրը հիւանդացաւ և բժիշկը նրան մի դաւը դեղ տուեց խմելու։ Աղջիկը տեսաւ, որ մայրը դժուարութեամբ է խմում դեղը, ասաց նրան.

—Մայրիկ, տուր, ես խմեմ քո փոխարէն։

---

9. ԽԵԼԱՑԻ ԱԳՌԱՒԸ

Ագռաւը ծարաւ էր։ Նա շատ դէսուդէն ընկաւ և վերջապէս դաշտում տեսաւ մի կճուճ, որի մէջ ջուր կար. բայց ջուրն այնքան ցած էր, որ ագռաւը չէր հասնում։ Նա սկսեց մանր քարեր գցել կճուճի մէջ. այդպիսով ջուրն այնքան բարձրացաւ, որ նա խմեց, ծարաւը կոտրեց և թռաւ, իւր գործին գնաց։

---

10. ՄԱՆՈՒԿՆԵՐՆ ՈՒ ԳՈՐՏԵՐԸ

Մանուկները խաղում էին գետի ափին և յանկարծ տեսան, որ ջրում շատ գորտ կայ։ Նրանք քարեր հաւաքեցին և սկսեցին մէկ-մէկ քարկոծել գորտերին։ Երեխաները սաստիկ ուրախանում էին։

Մի գորտ գլուխը դուրս հանեց ջրից ու ասաց.

—Մանուկներ, բաւական է քար գցէք. դա ձեզ համար խաղ է, իսկ մեզ համար—մահ։

Առած։—Կատուին խաղ է, մկանը մահ է։

---

11. ԱՐԵՎ

Արև, արև, եկ, եկ,
Նախշուն քարին վեր եկ,
Մեր ոչխարին մտիկ արա,
Որ գայլը գայ, իմաց արա։

---

12. ԱՑՐՐԵՆԱՐԱՆ

Փոքրիկ մանուկը միշտ տեսնում էր, որ հայրը գիրք կարդալիս ակնոց էր դնում աչքերին։ Մի օր էլ նա խնդրեց հորը.

—Հայրիկ, ինձ համար էլ ակնոց գնիր. ես էլ ուզում եմ քեզ պէս գիրք կարդալ։

—Լաւ,—պատասխանեց հայրը.— ես քեզ համար մանկական ակնոց կըգնեմ։—Եւ որդու համար գնեց մի այբբենարան։

Առած.— Ով կարդայ, նա մարդ ա։

---

13. ԿԱՐԴԱԼ—ԳՐԵԼ

Երբ որ լեզուս բացուեցաւ,
Ազատ խօսիլ սովրեցայ,
Բարի մօրս ձեռքի տակ,
Գրել—կարդալն սկսայ։

Շատ ժամանակ չանցկացած
Այլևս գիր կարդալը

Այնպէս դժուար չէր թուում,
Ինչպէս կասեն ծոյլերը։

Այնուհետև ինձ համար
Հոլ, վէգի, գնդակի չափ
Սիրելի են թուղթ, գրիչ,
Գիրք, քանոն, մատիտ, տետրակ։

---

14. ԴԱՍԱՏԱՆ

Դասատան մէջ նստած են աշակերտները։ Աշակերտների առաջ նստած կամ կանգնած է վարժապետը։ Վարժապետը սովորեցնում է։ Աշակերտները սորում։ Դասատան մէջ աշակերտները կարդում են, վորում են։ Դասատան մէջ աշակերտները կարդում են, գրում են, հաշուում են, նկարում են։ Աշակերտների դէմ դրած է մի մեծ գրատախտակ։ Գրատախտակի մօտ կան կաւիճ և սպունգ։ Գրասեղանների վրայ դրած են դասական առարկաներ—գիրք, տետրակ, քարեգրիչ։

Դասական առարկաներ։—Գիրք, տետրակ, քարեգրիչ, գրչակոթ, գրիչ, մատիտ, քարեգրիչ, քանոն, թանաքաման, սպունգ։
Խաղալիքներ։—Գնդակ, տիկնիկ, բզզան, վէգ...

ԳՐԱՒՈՐ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Օրտագրեցէք այս բառերը և ձայնաւորը տառերի տակ փիծ քաշեցէք։ Յետոյ առանձին գրեցէք ձայնաւոր տառերը։

Աղ։ Մաղ։ Եզ։ Էշ։ Գերի։ Գինի։ Ընկեր։ Մուկը։ Որդ։ Ոզնի։ Օրիորդ։ Ուղտ։ Շուն։ Կատու։

2. Գրեցէք հայերէն այբուբենի բոլոր բաղաձայն տառերը։

բ. գ. դ...

3. Լրացրէք այս վարժութիւնը։

Գիրքը դասական առարկայ է։ Գնդակը խաղալիք է։ Մատիտը... Գրիչը... Վէգը... Տետրակը... Տիկինը... Բզզանը... Քարետախտակը...

---

15. *ՄԱԴԻԿ*

Սագիկ — մագիկ,
Ի՛մ սիրունիկ,
Ես քեզ կըտամ
Քաղցը կուտիկ,

Որ դու ուտես,
Շուտ մեծանաս,
Ուրախ ապրես,
Զուարճանաս։

Երբ մեծանաս,
Մեծ սագ դառնաս,
Ես կըխնդրեմ
Ի՛մ մայրիկիս,

Որ նա ժողուէ
Քո փետուրներ
Եւ ինձ համար
Շինէ բարձեր։

Կեր, իմ սագիկ,
Կեր, սիրուրիկ,
Որ մեծանաս,
Մեծ սագ դառնաս։

---

16. *ՍԱԳՆ ՈՒ ԱՐԱԳԻԼԸ*

Լողում էր սագը լճի երեսին, լողում էր և այսպէս խօսում ինքն իրան.



—Ճշմարիտ, ի՜նչ զարմանալի թռչուն եմ ես։ Գետնի վրայ ման եմ գալիս, ջրումը լողանում, օդումը թռչում։ Ինձ նման ուրիշ թռչուն չկայ աշխարհիս երեսին։

Արագիլը լսեց սագի խօսքերը և ասաց նրան.

—Շատ յիմար թռչուն ես դու, սագիկ։ Որ այդքան պարծենում ես, ապա՜, ասա՛, տեսնեմ, կարո՞ղ ես ձկան պէս լող տալ, եղջերուի պէս վազել կամ արծուի պէս թռչել։ Աւելի լաւ է մի բան իմանալ և հիմնաւոր, քան թէ շատ բան և բոլորն էլ թերի։

---

17. *ԲԱԴԻԿ*

—Բադիկ, բադիկ,
Կարմիր թաթիկ,
Ո՞ւր ես գնում կամաց-կամաց,
Ձագուկներդ չորս կողմդ առած։
—Ես գնում եմ ջուր գտնելու,
Ձագուկներս լուանալու.
Ձագուկներս մաքուր-մաքուր,
Տղոց երեսն աղտ է ու մուր։

---

18. ՍՏԱԽՈՍ ՀՈՎԻՒԸ

Մի փոքրիկ հովիւ սովորութիւն էր արել խաբել իւր ընկերներին։ Շատ անգամ նա երկիւղալի ձայնով կանչում էր.

—Գայլը եկա՜ւ, գայլը եկա՜ւ։

Հովիւները գալիս, տեսնում էին, որ գայլ չկայ։ Իսկ ստախոս մանուկը ծիծաղում էր նրանց վրայ։

Մի օր էլ այս հովուի հօտի վրայ մի գայլ յարձակուեցաւ։ Նա սրտապատառ սկսեց կանչել.

—Գայլը եկա՜ւ, գայլը եկա՜ւ։

Ընկերները կարծեցին, թէ էլի խաբում է, տեղերից չշարժուեցան։ Գայլը նրա հօտի մէջ ընկաւ և պատառոտեց ոչխարներին։

Առած.—Սուտ ասողի տունը կրակ ընկաւ, ոչ ոք չհաւատաց։

---

19. ՀՈՎՈՒԻ ԱՆԿՈՂԻՆԸ

Սարի լանջը մահճակալ,
Ձեչոտ քարը գլխակալ,
Մի հին կարպետ ուսերին,—
Այս է հովուի անկողին։
Երբ անձրև է կաթկաթում
Եւ կարպետը թրխկթրխկում,
Հովիւն անուշ քնի մէջ
Քաղցր երազ է տեսնում
Եւ խնդում,
Ծիծաղում...
Ուխա՜յ, ուխա՜յ, սիրո՛ւն հովիւ, քունդ անո՛ւշ։

---

20. ԾԾՄԱՐՏԱԽՈՍ ՄԱՆՈՒԿԸ

Մանուկին մի փոքրիկ ուրագ ընծայեցին։ Նա այնքան ուրախ էր, որ ձեռքն ընկածը կոտրատում, փչացնում էր։ Մանուկը մինչև անգամ կտրեց մի ծառ, որը նրա հայրը տնկել էր այգում։ Երբ որ հայրը տեսաւ փչացրած ծառը, սաստիկ տխրեց և հարցրեց որդուն.

—Ո՞վ է կտրել այս ծառը. ես պէտք է խիստ պատժեմ յանցաւորին։

—Ինձ պատժիր. ես եմ արել այդ,—պատասխանեց մանուկը։

—Այս ծառը շատ սիրելի էր ինձ,—ասաց հայրը,—բայց քո ճշմարտախօսութիւնն ամեն բանից թանկ արժէ։—Եւ նա գրկեց ու համբուրեց որդուն։

---

21. ԿՈՅՐԸ

Մի անգամ, գիշերը, մի կոյր մարդ մէկ ձեռքում կճուճով կաթ, իսկ միւսում մի վառած լապտեր բռնած, կամաց-կամաց առաջ էր գնում։ Ճանապարհին նրան պատահեց մի երիտասարդ և ասաց.

—Ա՜յ յիմար մարդ, ինչի՞ դ է հարկաւոր այդ լապտերը. չէ՞ որ դու ոչինչ չես տեսնում։

—Այս լապտերը ես վերցրել եմ քեզ նման խելացի մարդկանց համար, որ նրանք չդիպչեն ինձ և կաթս չթափեն,—պատասխանեց կոյրը։

Առած.—Կոյրն ի՞նչ կ'ուզէ—ջուխտ աչքով լոյս։

---

22. ԿԱՐԱՍԻՆԵՐ

Ամեն մի տան մէջ կարասիներ կան—սեղաններ, աթոռներ, պահարաններ, մահճակալներ։ Կարասիները շինում են փայտից և ներկում են, որ չփչանան և գեղեցիկ լինին։ Աթոռների նստելատեղերը շատ անգամ փափուկ կտորով են ծածկուած լինում։ Կարասիները շինում են ատաղձագործները։



Կարասիներ։—Սեղան, աթոռ, պահարան, բազմոց, բազկաթոռ, մահճակալ, նստարան, գզրոց, դարակ։

ԳՐԱՒՈՐ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

4. Արտագրեցէք այս միավանկ բառերը։

Օր։ Եզ։ Խաղ։ Մաղ։ Աղջ։ Հայր։ Ձայն։ Հող։ Բանդ։ Նաւ։ Էշ։ Շիշ։ Քար։ Մուրճ։ Դուր։

5. Գրեցէք ձեզանից միքանի միավանկ բառեր։

6. Վանկեցէք այս բառերը։

Ա-նի։ Աղի։ Եթէ։ Եղան։ Արա։ Ուղիղ։ Իրան։ Օղակ։ Կաշի։ Կողակ։ Մեղու։ Շաքար։ Կօշիկ։

7. Լրացրէք այս վարժութիւնը։

Գիրքը դասական առարկայ է, իսկ սեղանը... Բզզանը խաղալիք է, իսկ բազմոցը... Նստարանը կարասի է, իսկ թանաքամանը... Քանոնը դասական առարկայ է, իսկ պահարանը... Մահճակալը կարասի է, իսկ սպունգը...

---

23. ԵՐԿՈՒ ԱՅԾ

Առուակի վրայով մի նեղ գերան էր գցած անցուղարձ անելու համար։ Մի անգամ երկու այծ պատահեցան այդ գերանի վրայ։ Երկուսը մի անգամից չէին կարող անցնել. պէտք է մէկը յետ դառնար և միւսին ճանապարհ տար։ Բայց ոչ մէկը չէր ուզում այդ անել։ Նրանք սկսեցին վիճել։

—Դու յետ քաշուիր,—ասաց մէկը.—առաջ ես եմ բարձրացել գերանի վրայ։

—Չէ,—վրայ բերեց միւսը.—թող, որ առաջ ես անցնեմ. ես քեզանից մեծ եմ։

Եւ այծերը, ճակատ-ճակատի տալով, սկսեցին կռուել։ Հակառակի պէս գերանը թաց էր։ Գլուեցին, կռուեցին և երկուսն էլ թրջրմպալով ջուրը թափուեցան։

---

24. ՊԱՌԱՀՆ ՈՒ ԱՅԾԸ

Կար-չկար երբեմն
Մի աղքատ պառիկ,
Ունէր մեր պառաւը
Կաթնատու այծիկ։
Չալիկ-մալիկ
Կաթնատու այծիկ։
Պառաւը ձմեռը
Այծիկը պահեց,
Իւր բերնի պատառը
Նրա հետ կիսեց։
Սիրով-յոժար
Նրա հետ կիսեց։
Ձիւնը հալուեցաւ,
Բլսաւ կանաչ խոտ,
Պառաւն այծիկը
Դուրս տարաւ արօտ։

Ուրախ-զուարթ
Դուրս տարաւ արօտ։
Թանձր մառախուղը
Գետինը պատեց,
Պառաւի առջևից
Այծը կորցրեց։
Ափսոս, ափսոս,
Այծը կորցրեց։
Պառաւը լաց եղաւ,
Իսկ զայլը օռնաց,

Մոլորուած այծիկը
Բարձր մրկրկաց։
Մրկը՜կ, մրկը՜կ,
Այծը մրկրկաց։
Գայլը մօտ եկաւ,
Այծին շալակեց,
Պառաւը յետնից
Բարձրաձայն գոչեց՝
Հարա՛յ—հա՛յ—հարա՛յ
Բարձրաձայն գոչեց։

Խեղճը մնաց կանգնած
Մի փունջ խոտ ձեռին,
Անմխիթար ձայնով
Կանչելով այծին՝
Ե՜կ-եկ, եկ-եկ,
Կանչելով այծին։

---

25. ԲԱՐԻ ԳԻՒՂԱՑԻՆ

Գիւղում մի աղքատ ընտանիք էր ապրում—հայր, մայր և երկու տղայ։ Դրանց աղգականը մեռաւ և մի որբ աղջիկ թողեց։ Նրանք այդ աղջկան բերին, իրանց տանը պահեցին։

Կինն ասում էր մարդուն.

—Ա՜յ մարդ, Աշխէնին որ մեզ մօտ վերցրինք, մեր վերջին կոպէկն էլ նրա վրայ կրգնայ. աղի փող էլ չի մնալ, որ աղ առնենք, կերակրին խառնենք։

—Է՛հ, ոչինչ,—պատասխանեց մարդը,—մենք էլ կերակուրն առանց աղի կուտենք։

Առած.—Աղ ու հաց, սիրտը քաց։

---

26. ՈՐԲԻԿ

Փայլուն արևը արդէն մայր մտաւ,
Լուսինն էլ վաղուց գնաց թաք կացաւ.
Գիշերուայ սուքը աշխարհս պատեց
Եւ աշնանային ցուրտ քամին փչեց։

Ամեն մարդ քաշուեց իւր տունը մտաւ,
Ամեն երեխայ մօր գիրկն ընկաւ,
Միայն մի խեղճ որբ, որ չունէր հայր, մայր,
Ոչ մի ազգական, ոչ քոյր, ոչ եղբայր,
Ոտքերը բոբիկ, տկլոր ու քաղցած,
Մի տան պատի տակ մնաց կուչ եկած։

Բարի տանտէրը վերևից նայեց,
Մեր թշուառ որբին ներս հրաւիրեց.
Եւ այնուհետև տաբաբաղդ տղան
Ունէր իւր համար տէր ու տիրական։

---

27. ՈՒՏԵԼԻՔ ԵՒ ԽՄԵԼԻՔ

Առանց ուտելիքի մարդը կըմեռնի քաղցից։ Առանց խմելիքի նա կըմեռնի ծարաւից։ Մարդու ամենահարկաւոր կերակուրը—հացն է, իսկ ամենահարկաւոր խմելիքը—մաքուր ջուրը։

Առածներ.—Հաց ու պանիր, կեր ու քանիր։ Մի բաժակ ջուր ով ուզի՝ տուր։

Ուտելիք։—Հաց, սպաս, փլաւ, տապակած...
Խմելիք։—Ջուր, կաթն, թէյ, սուրճ, գինի, գարեջուր, օղի...

---

28. ԳՈՅՆԵՐ

Ձիւնն սպիտակ է։ Ածուխը սև է։ Մոխիրը գորշ է։ Ոսկին դեղին է։ Խոտը կանաչ է։ Երկինքը կապոյտ է։ Արիւնը կարմիր է։

Կաթը, մածունը, թանը սպիտակ են։ Թանաքը սև է։ Ամպերը գորշ են։ Պղինձը դեղին է։ Ծառերի տերևները կանաչ են։ Մանուշակը կապոյտ է։ Վարդը կարմիր է։

---

29. ՄԵՐ ՍԵՆԵԱԿԸ

Մեր սենեակն ունի յատակ, առաստաղ և չորս պատ։ Պատերն ու առաստաղը սպիտակ են. յատակը ներկած է կարմիր գոյնով։ Պատերի մէջ շինած են դռներ և լուսամուտներ։ Սենեակում կան վառարան սեղան, աթոռներ, պահարան և դարակներ։ Պահարա-

նի մէջ մենք պահում ենք մեր ամանները։ Դարակներում դնում ենք մեր սպիտակեղէնը, իսկ մահճակալի մօտ պատից կախուած են մեր հագուստները։

Ամաններ։—Բաժակ, ափսէ, ջրաման, ըմպանակ, չիչ, կուժ կաթսայ, ինքնաեռ, թէյաման։

Հագուստներ և սպիտակեղէն։—Վերարկու, բաճկոն, շապիկ, մուշտակ, գուլպայ, թաշկինակ, անդրավարտիք, երեսսրբիչ, սաւան։

ԳՐԱՒՈՐ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

8. Արտագրեցէք այս երկավանկ բառերը։

Կա-տու։ Քաղաք։ Երկինք։ Երկիր։ Ոզնի։ Թանաք։ Գիտուն։ Գունատ։ Եղէգ։ Երկար։

9. Գրեցէք ձեզանից միքանի երկավանկ բառեր։

10. Արտագրեցէք այս բազմավանկ բառերը։

Գիւղացի։ Քաղաքացի։ Աշակերտ։ Ժամանակ։ Զաւակասէր։ Զինուորական։ Մանկական։ Ժամանակատոր։ Ընտանի։

11. Լրացրէք այս վարժութիւնը։

Հացը ուտելիք է, իսկ բաժակը... Վերարկուն հագուստ է, իսկ երեսսրբիչը... Սաւանը սպիտակեղէն է, իսկ գինին... Տապակածը ուտելիք է, իսկ թէյը... Շապիկը սպիտակեղէն է, իսկ ինքնաեռը...Աթոռը կարասի է, իսկ շիշը...Ջուրը խմելիք է, իսկ կուժը...

30. ԱՆՁՐԵՒ

Անձրև՛, անձրև՛, ցած արի,
Բլսցուր ցորեն ու գարի,

Բլսցուր ծաղիկ, կանաչ խոտ,
Ալէ փոշի, մաքրէ օդ։
Անձրև, անձրև՛, ցած արի,
Դալդ ամենիս բարի։

---

31. ԸՆՏԱՆԻ ԵՒ ՎԱՅՐԵՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Հաւը մեզ համար ձու է ածում և տանից չի հեռանում. իսկ կաքաւը, սարեակը, ծիծեռնակը ազատ թռչուններ են. նրանք ուր ուզում, թռչում, գնում են։ Շունը պահպանում է ոչխարների հօտը և մարդկանց տները, հաւատարիմ ծառայում է մարդուն։ Իսկ գայլը, աղուէսը շրջում են անտառներում, մտնում են գիւղերը, ոչխար, հաւ ճանկում ու տանում, լափում են։ Կովը մեզ համեղ կաթն է տալիս, եզն ու ձին օգնում են գիւղացուն աշխատանքի ժամանակ, իսկ արջը կատաղի գազան է, մարդուն թշնամի։ Հաւը, շունը, կովը, ձին, ոչխարը—ընտանի կենդանիներ են, իսկ կաքաւը, գայլը, աղուէսը, արջը—վայրենի։

Ընտանի կենդանիներ։—Ձի, կով, խոզ, կատու, շուն, ոչխար, այծ, ուղտ, էշ, գոմէշ։

Վայրենի կենդանիներ։—Արջ, աղուէս, գայլ, առիւծ, վագր, նապաստակ, ճագար, սկիւռ։

32. ԳԱՌՆՈՒԿ

Սիրուն, անմեղ իմ գառնուկ,
Բուրդդ սպիտակ ու փափուկ,
Դաշտ վազելով ու արօտ,
Մօրդ քաշում ես կարօտ։

Մի լաք, գառնուկ սիրական,
Փոքրիկ տղի դու նման,
Կըզայ մայրըդ, հետը շատ
Կըբերէ քեզ անուշ կաթ։

---

33. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԷՃԸ

Կովը, եզը և շունը վիճում էին միմեանց հետ, թէ իրանցից որին տէրը շատ է սիրում։

—Իհարկէ նա ինձ ամենքիցդ շատ է սիրում,—ասաց եզը,—ես նրա արօրն ու գութանն եմ քաշում, նրա համար վայտ եմ կրում։ Նա ինձ լծում է սայլին, ցորենը ջրաղաց տանում, աղում է, քաղաքում ծախում և իրան ապրուստը անում։ Ես որ չլինիմ, նա ինչպէս կարող է ապրել։

—Չէ՛, նա ինձ է շատ սիրում,—վրայ բերեց կովը.—ես նրա ընտանիքը կաթնով եմ կերակրում։ Այն մա-

ծունն ու կսթը, այն սերն ու կարագը, այն իւղն ու պանիրը, որ նրանք վայելում են, ո՞ւմ տուածն է։ Եթէ ես չլինիմ, բոլորը քաղցած կրկոտորուին։

—Չէ՛, չէ՛, ինձ երկսիցդ էլ շատ է սիրում,—օռնաց շունը,—ես նրա ունեցած-չունեցածն եմ պահպանում։

Տէրը լսեց նրանց վէճը և ասաց.

—Բաւական է վիճէք. զուք չգիտէ՞ք, որ ամենքդ էլ ինձ հարկաւոր էք և ոչ մէկդ միւսի արածը չէք կարող անել։ Այդ պատճառով ես ձեզ ամենքիդ էլ սիրում եմ, զուք էլ սիրեցէ՛ք միմեանց։

---

34. ՏԱՏՆ ՈՒ ԿՈՎԸ

—Ա՛ռի, իմ կովիկ,
Հազրել եմ կովկիթ,
Գրպրզեմ տակիդ,
Քաշեմ քո պտիկ։

Մի՛ վախիր, կովիկ,
Հորթիդ կըտամ կաթ,
Նրա համար մաս
Ես կըթողնեմ շատ։

Կովը լի կուրծքը
Բացեց համարձակ,
Կաթը վեր թողեց
Իւր կրծքից արձակ։

Բայց անգութ տատը
Քաշեց ու մղեց,
Հորթուկի համար
Կաթիլ չթողեց։

---

35. ԳԱՌՆԵՐՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Ոչխարների հօտն արածում էր անտառի մօտ. երկու գառը հեռացել էին հօտից և ուրախ-զուարթ խաղում էին ծառերի մէջ։

—Զարութիւն մի՛ անէք, գառնո՛ւկներ,—ասաց մի պառաւ ոչխար,—կարող է մի փորձանք պատահել։

—Ոչխարը սուտ է խօսում,—թփերի միջից ձայն տուեց գայլը.—նա պառաւ է և չի կարող ձեզ պէս խաղալ ու թռչկոտել, դրա համար էլ նախանձում է ձեզ։ Որքան ուզում էք, վազվզեցէ՛ք այս գեղեցիկ անտառի մէջ։

Ցիսմար գառներն այդպէս էլ արին. նրանք թողին, հեռացան հօտից։ Գայլի ուզածն էլ այդ էր։ Նա բռնեց գառներին ու կերաւ։



36. ԿՈՐԱԾ ՀՈՐԹԸ

Զիւն էր գալիս փաթիլ-փաթիլ,
Հետն էլ անձրև՝ կաթիլ-կաթիլ.
Այդ միջոցին մի պառաւ կին
Հորթն էր փնտրում դաշտի միջին։

Կովը եկաւ տաւարիցը,
Կուրծքն ու ծծեր կաթնով լիքը.
«Հորթուկս ուր է, նա բառաչեց,
Խեղճ պառաւին լացացրեց։

Մինչդեռ այսպէս պառաւ ու կով
Ողբում էին լաց ու կոծով,
Յանկարծ լսուեց մի բարակ ձայն.
Կովն իմացաւ, որ հորթն է այն։

Կովը վազեց բառաչելով,
Պառաւը գնաց տընքտընքալով.
Կորած հորթը մօրը գտաւ,
Լիք ծծերը բերանն առաւ։

Ծծեց բոլոր կաթն ու տռզեց,
Տանտիկնոջը բան չթողեց.
Բայց պառաւն այս անգամին
Սիրով ներեց չար հորթուկին։

---

37. ԽՈՏԱԿԵՐ ԵՒ ՄՍԱԿԵՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Գայլը շատ անգամ ոչխարներ ու հորթեր է լափում։ Աղուէսը սիրում է հաւի միս անուշ անել։ Ձներն ու կատուներն էլ միս են սիրում։ Բայց այդպէս չեն կովերը, ձիերը, այծերը, ոչխարները, նապաստակները։ Կովերն ու ձիերը ամառը կանաչ են ուտում, իսկ ձմեռը—խոտ։ Նապաստակը ձմեռը ծառերի արմատներն է կրծում, իսկ գարունն արածում է մարգագետիններում։ Ահա թէ ինչու կենդանիներից միքանիսին մենք խոտակեր ենք անուանում, իսկ միւսներին—մսակեր։

Ինչ խոտակեր եւ մսակեր կենդանիներ էք տեսել։

ԳՐԱՒՈՐ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

12. Գրեցէք ձեզանից միքանի բազմավանկ բառեր։

13. Վանկեցէք այս բառերը։

Կը-տոր։ Մնալ։ Գնալ։ Մըկ-ըատ։ Կտրել։ Խնդիր։ Ձնծաղիկ։ Թռչուն։ Թշնամի։ Խնձոր։ Մանր։ Կայսր։ Ծանր։ Բարձր։

14. Լրացրէք այս վարժութիւնը։

Իմ գիրքը—գիրքս։ Քո գիրքը—գիրքդ։ Նրա գիրքը—գիրքն (գիրքը)։ Իմ մայրը—մայր+։ Քո մատիտը—մատիտ+։ Քո գլուխը—գլուխ+։ Իմ գրիչը—գրիչ+։

14. Լրացրէք այս վարժութիւնը։

Ձին ընտանի կենդանի է, իսկ աղուէսը... Արջը վայրենի կենդանի է, իսկ կովը... Խոզը... Գայլը... Առիւծը... Վագրը... Շունը մսակեր կենդանի է։ Այծը... Ոչխարը... Էշը... Գայլը... Առիւծը... Ուղտը... Ձին... Արջը...

16. Լրացրէք այս վարժութիւնը։

Թուղթը սպիտակ է։ Երկինքը... Ձիւնը... Կուպրը... Վարդը։ Մանուշակը... Արիւնը... Կարագը... Լեղակը... Մուրը... Ծուխը...

---

38. ՆԱՊԱՍՏԱԿ

Մի վազիր այդչափ արագ,
Իմ սիրունիկ նապաստակ,

Շատ փոքրիկ ես տակաւին,
Թաթիկներդ կըյոգնին։

Քեզ կըբերեմ կաթն ու հաց
Ջաքրեջրով համեմած.
Ուտես, խմես, զօրանաս,
Բանից կարօտ չմնաս։

Ծանր-ծանր կըքայլես,
Սիրտս վեր-վեր կըհանես.
Կարձակեմ քեզ, երբ ուզես,
Կերթաս, ազատ կարածես։

---

39. ԳԱՅԼՆ ՈՒ ԱՅԾԸ

Բարձր, քարքարոտ սարի գլխին արածում էր վայրենի այծը, իսկ ներքևը, սարի տակ, քաղցած գայլն էր թափառում։ Նա ձայն տուեց այծին.

—Ինչո՞ւ ես այդ քարերի մէջ արածում, սիրելի՛ այծիկ. ցած արի՛, այստեղի կանաչ, հիւթալի խոտը վայելի՛ր։

—Հիւթալի խոտը քեզ համար պահիր, գայլ եղբայր,—պատասխանեց այծը.—ինձ այստեղ էլ բաւական կերակուր կայ։

Առածներ.—Գայլն ամպ օրը կուրախանայ։—Գայլն ընկաւ ոչխարի մէջը, վայ մէկի տիրոջը։

---

40. *ԹՌՉՈՒՆՆԵՐ*

Բարձր ամպերի միջից թռչում է արծիւը։ Սրատես աչքերը չորս արած, նա որս է որոնում։ Յանկարծ նետի պէս յարձակւում է մի որևէ կենդանու կամ թռչունի վրայ, յափշտակում է նրանց և ճանկերի մէջ առած՝ իւր բունն է տանում։ Բազէն էլ արծուի նման գիշատող թռչուն է։ Բայց այդպէս չեն մեր ընտանի թռչունները—հաւերը, բադերը, սագերը, հընդկահաւերը։ Նրանք կերակրւում են հատիկներով, բզէգներով, որդերով և հացի փշրանքներով։ Մարդիկ նրանցից շատ օգուտներ են ստանում։ Փոքրիկ ծիծեռնակը, դեղձանիկը, արտուտիկը, քաղցրաձայն սոխակը զուարճացնում են մեզ իրանց երգերով։ Մարդիկ նրանց երգող թռչուններ են անուանում։

Ընտանի թռչուններ։—Հաւ, սագ, բադ, հնդկահաւ, աղաւնի։
Գիշատող թռչուններ։—Արծիւ, ցին, բու, բազէ, ագռաւ։
Երգող թռչուններ։—Սոխակ, դեղձանիկ, արտոյտ, սարեակ, ծիծեռնակ։

ԳՐԱՒՈՐ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

17. Լրացրէք այս վարժութիւնը։

Սագ—սագիկ։ Բադ—... Հատ—... Կուտ—... Շուն—... Բուն—... Այծ—... Մայր—... Հայր—... Քոյր—...
Ցուն—տնակ։ Թռչուն—... Գունդ—... Նաւ—...

18. Վանկեցէք հետևեալ բառերը։

Ըզ-զոյշ։ Սպունգ։ Զգալ։ Զմայլել։ Շտապել։ Ստանալ։ Սպասել։ Սպանել։ Ստոր։ Շտեմարան։

19. Գրեցէք և ւ տառի տակ գիծ քաշեցէք։

Հաւ։ Կաւ։ Նաւակ։ Թագաւոր։ Հիմնաւոր։ Ցարաւ։ Կերաւ։ Եկաւ։ Թիւ։ Անիւ։ Ազնիւ։

20. Արտագրեցէք և վ տառի տակ գիծ քաշեցէք։

Վարդ։ Վերմակ։ Վարդան։ Ով։ Ովկիանոս։ Նաւավար։ Կառավարել։ Զօրավար։ Գրավաճառ։

21. Առանձին խմբերի բաժանեցէք։

Սագ։ Բու։ Մատիտ։ Վազր։ Եզ։ Բաղ։ Գիրք։ Սոխակ։ Գընդակ։ Բազմոց։ Քանոն։ Ցինկիկ։ Մահճակալ։ Աթոռ։ Սպունգ։ Վէզ։ Վերարկու։ Երեսսրբիչ։ Շապիկ։ Գուլպայ։ Թաշկինակ։ Բաժակ։ Կաթսայ։ Ինքնաեռ։ Թանաքաման։ Հաց։ Ցապակած։ Սուրճ։ Գինի։ Օղի։ Սպաս։ Փլաս։

---

41. ԹՌՉՆԱԿԻ ԲՈՒՆԸ

Մանուկներն իրանց պարտիզում մի թռչնի բուն գտան։ Այնտեղ նստած էին երկու փոքրիկ, մերկ ձագուկներ։ Մանուկները վեր առան նրանց և բերին տուն։ Հայրն ասաց նրանց.

—Զաւակներս, դուք շատ վատ բան էք արել. դուք գիտէք, թէ որքան կըտխրեն ու կըվշտանան սրանց ծնողները, երբ իրանց ձագուկներին չգտնեն բնի մէջ։ Բացի դրանից, սրանք շուտով կըսատակեն, որովհետև դուք չէք կարող կերակրել։

Մանուկները սաստիկ խղճացին ձագերի վրայ և նրանց յետ տարան պարտէզն ու դրին իրանց բնի մէջ։

---

42. ԾԻԾԵՌՆԱԿ



Խեղճ ծիծեռնակը, տես, ամենևին չէ հանգստանում. ամբողջ օրը թռչում է, ծղօտներ է հաւաքում, կոուցովը կաւ է կրում, իւր համար բուն է շինում։ Բունը շինում, վերջացնում է թէ չէ, մէջը երեք ձու է ածում, նրանց վրայ երեք շաբաթ պինդ նստում և փոքրիկ ձագուկներ է հանում։ Ձագուկները որ դուրս են գալիս, բերանները բաց են անում և կերակուր խնդրում։ Ծիծեռնակը թռչում, դէսուդէն է ընկնում, մժեղներ բռնում ու նրանց կերակրում։

Մի քիչ ժամանակ որ անց է կենում, ձագերը թեւաւորւում են, բնից դուրս թռչում և իրանց մօր հետ ճանապարհ ընկնում,—կապոյտ ծովերի, բարձր սարերի վրայից անցնում։

---

43. ՀՊԱՐՏ ԱՔԱՂԱՂ

Երկու աքաղաղ կռուեցին և մէկը յաղթեց միւսին։ Յաղթուողը փախաւ, սրահի տակը մտաւ, իսկ յաղթողը բարձրացաւ կտուրը և հպարտ-հպարտ „ծուղրուղո՞ւ“ կանչեց։ Այդ րոպէին արծիւը թռչում էր վերևից. նա նկատեց հպարտացող աքաղաղին, յարձակուեց նրա վրայ, բռնեց ու տարաւ, անուշ արաւ։

Առած.—Ով որ փքանայ, շուտով չքանայ։

---

44. ՍՈՂՈՒՆՆԵՐ ԵՒ ՁԿՆԵՐ

Գորտը չորս ոտն ունի։ Օձը ոտներ չունի. նա իւր երկար մարմինը քաշ է տալիս գետնի վրայ։ Չոր տեղերում, անտառում և դաշտում, դուք կըտեսնէք գեղեցիկ մողէսին։ Թէ գորտի և թէ մողէսի փորը ման գալիս քսւում է գետնին։ Գորտերն ու մողէսները չեն կարող վնասել մեզ, որովհետև թոյն չունին։ Իսկ օձերը թունաւոր են։ Նրանց կծածը վտանգաւոր է և շատ մարդիկ են մահացել նրանց թոյնից։ Բայց ջրային օձերն էլ, գորտերի և մողէսների նման, թոյն չունին։ Նրանց ատամներն այնքան մանր են, որ չեն կարող մարդու կաշին ծակել։

Բոլոր այս կենդանիները սողուն են կոչւում։

Ծովերում ու գետերում շատ տեսակ-տեսակ ձկներ են ապրում։ Նրանք լողում են իրանց լողնակներով. ձկները սառն արիւն ունին. նրանց մարմինը ծածկուած է թեփուկներով։

Սողուններ։— Մողէս, գորտ, օձ, կրիայ։
Ձկներ։—Գարմրախայտ, գայլաձուկ, օձաձուկ, կապոյտ, տառեխ, կողակ

---

45. ԳԻՒՂԱՑԻՆ ԵՒ ՕՁԸ

Ձմեռն էր։ Գիւղացին անտառ գնաց փայտ կտրելու։ Փայտ կտրելիս նա տեսաւ մի օձ, որ ցրտից սառել, փետացել էր։ Բարի գիւղացին խղճաց օձին, վերցրեց, դրեց

կրակի մօտ, որ տաքանայ։ Օձը տաքացաւ թէ չէ, վրայ հասաւ, որ կծէ գիւղացուն։

—Ապերախտ,—ասաց մարդը,—իմ լաւութիւնը դրանո՞վ ես վճարում։—Ասաց ու կացնով խփեց, գլուխը ջախջախեց։

Առած.—Օձն իրան տաքացնողին կըկծէ։

---

64. ՄԻՋԱՏՆԵՐ

Գարունը բացւում է թէ չէ, հազարաւոր միջատներ են սկսում երևալ։ Օդի մէջ մոծակներն ու մլակներն սկսում են իրանց զարնանային պարը։ Նախշուն թիթեռները, ոսկեգոյն բզէզները, կանաչ մորեխները խաղում, զուարճանում են արեգակի ճառագայթների տակ։ Բզզում է պիծակը, երգում, թռչկոտում է անգործ ճանճը։ Մեղուն, ծաղկից ծաղիկ թռչկոտելով, քաղցր մեղր է ժողովում։ Իսկ աշխատասէր մրջիւնն ահագին բեռը շալակած, վազում, շտապում է իւր քանդուած բունը նորոգելու։

_Միջատներ։—ճանճ, բզէզ, թիթեռ, մեղու, մրջիւն, մոծակ, մլակ, պիծակ, մորեխ, սարդ, ճպուռ։

ԳՐԱՒՈՐ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

22. Գրեցէք և ուր որ հարկաւոր է ւ կամ վ դրէք։

Մեր դրացին գրա+աշտան է։ Առա+օտը ես դպրոց պիտի գնամ։ Վարդա+առին մեզ մօտ հիւրերը կըգան։ Հայրս գեղեցիկ

զա+ազան գնեց։ Գիւղացին մի օրա+ար հող ունի։ Թագ+որը գո+եց իւր զօրա+արներին։

23. Գրեցէք և ուր որ հարկաւոր է օ կամ ո դրէք։

Ես հ+րս նամակ գրեցի։ Գիւղացին հ+րից ցորեն է հանում։ Սաթենիկը իւր մ+ը հետ նստած է այգում։ Մ+ին թուի Վարդն անուշ հ+տ ունի։ Հովիւն իւր հ+տը քշեց դէպի դաշ

24. Լրացրէք այս վարժութիւնը։

Ծառեխը ծուկ է, իսկ ըզէզը... Թիթեռը միջատ է, իսկ զորտը... Ճպուռը միջատ է, իսկ կարմրախայտը... Մողէսը սող է, իսկ մլակը... Կրիան սողուն է, իսկ մրջիւնը...

---

47. ՄԵՂՈՒՆ ՈՒ ԹԻԹԵՌԸ

—Մ՛խ, ափսոս, որ անձրև գալիս,—ասաց Թիթեռը և թաքցաւ տերևների տակ։

—Այո՛, ափսոս,—ձայն տուաւ մեղուն, որ նստած էր նրանից ոչ հեռու։

—Եթէ լաւ եղանակ լինէր,—նորից ասաց Թիթեռը,—ես կըթռչէի դէպի դաշտ, կըխաղայի և կըզուարճանայի։

—Իսկ ես կըգնայի իմ գործին և մեղր կըժողովէի ծաղիկներից,—ասաց մեղուն։

---

48. ՄԵՂՈՒ

Հա՛, ծաղեցաւ արեգակը,
Հա՛, ծաղկեցաւ մանուշակը,

Մեղուն թողեց իւր փեթակը՝
Տըզտըզալով, տըզտըզալով։

Մեղուն թռաւ ծաղկից ծաղիկ,
Մեղր առաւ քաղցր, անուշիկ,
Մոմը տարաւ հոտոտ, լուսիկ՝
Պըզպըզալով, պըզպըզալով։

Անուշ մեղրը մանր տղոց,
Դեղին մոմը ամեն սրբոց,
Իսկ չարերին կըճ ու խայթոց՝
Կըսկըծալով, կըսկըծալով։

---

49. ՄՐՋԻՒՆԸ ԵՒ ԱՂԱՒՆԻՆ

Մրջիւնը ծարաւ էր։ Նա մօտեցաւ առուակին, որ ջուր խմէ։ Յանկարծ նա ջուրն ընկաւ և քիչ էր մնում, որ խեղդուի։ Այդ րոպէին առուակի վրայով մի աղաւնի էր թռչում։ Նա տեսաւ ջրի երեսին փռուած մրջիւնին և խղճաց վրան։ Իսկոյն շտապեց, ծառից մի տերև պոկեց ու գցեց առուակի մէջ։ Մրջիւնը բարձրացաւ տերևի վրայ և խեղդուելուց ազատուեց։

Առուակի մօտերքը մի որսորդ թռչուններ էր որսում։ Նա տեսաւ մեր աղաւնուն, որ պատի վրայ նստած հանգստանում էր։ Շար որսորդը հրացանը ուղղեց նրան, որ սպանէ։ Մրջիւնը նկատեց այս բանը և վազեց, պինդ կծեց որսորդի ձեռքը։ Որսորդը ցնցուեց. հրացանը տրաքեց, բայց չդիպաւ աղաւնուն։

Առած.—Ինչ որ ցանես, այն կըհնձես։

---

50. ԹԻԹԵՌ ԵՒ ՄԱՆՈՒԿ

ՄԱՆՈՒՆ.

—Սիրուն Թիթեռ, ինձ ասա,
Թէ ինչով ես դու ապրում.
Ամբողջ օրը խաղում ես,
Ի՞նչպէս է, որ չես յոգնում։

ԹԻԹԵՌ.

—Սիրուն, կանաչ դաշտերում
Ես ապրում եմ համաձակ,
Ծաղկանց բուրմունքը անուշ
Իմ կերակուրս է միակ։

Բայց իմ կեանքը շատ կարճ է,—
Նա մի օրից չէ երկար.
Բարի եղիր, ով մանուկ,
Խնայիր ինձ, ձեռք մի տար։

---

51. ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԳՈԾԻՔՆԵՐ

Մարդիկ ապրում են շինութիւնների մէջ։ Շինութիւնները լինում են քարէ և փայտէ։ Քարէ շինութիւնները շինում են որմնադիրները տաշած քարից և աղիւսից, իսկ փայտէ շինութիւնները — հիւսները՝ դերաննե-

ից։ Շինութիւնները շինելիս և ուրիշ գործերի ժամանակ հարկաւոր են զանազան գործիքներ։

Շինութիւններ։—Տուն, դպրոց, գործարան, ամբար (շտեմարան), սրահ, գոմ, ջրաղաց, ախոռ։

Գործիքներ։—Դանակ, սղոց, հերոն, ունելիք, մուրճ, կացին, ուրագ, մկրատ, պատառաքաղ, ածելի, բահ, թի, դուր, ասեղ, հարթիչ, խոփ, գութան, արօր, գերանդի, փոցխ, մանգաղ, կամ, եղան։

---

52. ԾԱՌԵՐ ՈՒ ԹՓԵՐ

Ծառերն ու թփերը լինում են պտղատու և հասարակ։ Մարդիկ պտղատու ծառերն ու թփերը տնկում են պարտէզներում. իսկ հասարակ ծառերն ու թփերը անտառներում են բուսնում։ Ծառերից միքանիսը ծածկուած են լինում տերևներով, իսկ միւսները—փշերով։ Ծառերը մարդիկ կտրում են և ստացած փայտից իրանց համար բնակարաններ, նաւեր, կարասիներ և ուրիշ տեսակ մանր-մունր բաներ են շինում—ամաններ, խաղալիքներ, դասական առարկաներ և այլն։

Ծառեր (հասարակ և պտղատու)։—Կաղնի, մայրի, եղևնի, ուռենի, կէչի, կեռասենի, տանձենի, խնձորենի, սալորենի, բալենի, ընկուզենի, թթենի, թզենի։

Թփեր։—Մորենի, մոշի, վարդենի, մասրի։

Պտուղներ։—Խնձոր, սալոր, տանձ, բալ, նարինջ, կիտրոն։

ԳՐԱՒՈՐ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

23. Գրեցէք այս բառերը և է տառի տակ գիծ քաշեցէք։

Հոտաւէտ։ Ծաղկաւէտ։ Քաջապէս։ Մեծապէս։ Քարեղէն։ Հողեղէն։ Ճշտօրէն։ Հայերէն։ Ռուսերէն։ Ջրօրհնէք։—Գնացէք։ Կերէք։ Կըգրէք։ Կուտէք։ Կրտեսնէք։—Յովհաննէս։ Վրդանէս։ Սամուէլ։ Աբէլ։ Սուրէն։ Ռուբէն։ Արմինէ։

26. Գրեցէք և ուր որ հարկաւոր է ե կամ է գրէք։

Կով+ըն արածում+ն խոտաւ+տ դաշտում։ Կայ+նն սպան+ց Աբ+լին։ Այսօր մենք հայեր+ն դաս ունինք։ Հեղին+ն Սամու+լին գիրք ընծայ+ց։ Մարդիկ հողեղ+նարարածները +ն։

27. Բացրէք այս վարժութիւնը։

Դանակը զործիք է, իսկ դպրոցը... Օձը սողուն է, իսկ քահը... Մայրին ծառ է, իսկ մուրճը... Մորենին թուփ է, իսկ խնձորը... Բալենին պտղատու ծառ է, իսկ եղևնին... Տանձը պտուղ է, իսկ դուրը... Վարդենին թուփ է, իսկ արջը... Մեղուն միջատ է, իսկ սալորենին...

53. ԱՆՏԱՌ

Ի՜նչ գեղեցիկ է անտառը։ Ինչքան որ ներս ես գնում, այնքան հանդարտ է, այնքան սքանչելի է։

Բարձր, սիրուն ծառերը կտրում են ճանապարհդ։ Ծառերի կանաչ տերևների միջով կապույտ երկինքն է երևում։ Ճղների վրայ երգում են հազարաւոր թռչուններ։ Բացի ծառերից անտառում շատ թփեր էլ կան։ Ծառերի տակ, թփերի մէջ, բազմաթիւ կենդանիներ են ապրում —նապաստակ, ագուէս, եղջերու. կան և գիշատող գազաններ—գայլ, արջ։

---

54. ԾԵՐՈՒՆԻՆ ԵՒ ՄԱՀԸ

Մի ծերունի անտառում քիչ փայտ կտրեց, կապեց, շալակն առաւ և գնաց դէպի տուն։ Բեռը բաւական ծանր էր, տունն էլ հեռու։ Ճանապարհին նա յոգնեց, վայր դրեց բեռը և ասաց.

—Ա՜խ, երանի թէ մահը գար, հոգիս առնէր։

Մահն էլ, կարծես, հէնց այդտեղ լինէր։ Նա մօտեցաւ մարդուն և հարցրեց.

—Ահա՛ ես, ի՞նչ ես ուզում։

Ծերունին սաստիկ վախեցաւ և պատասխանեց.

—Ես քեզ կանչեցի, որ այս փայտը շալակս տաս։

---

55. ՀԱՅԱՌՈՅՄԵՐ, ԲԱՆՋԱՐԵՂԷՆՆԵՐ ԵՒ ԾԱՂԻԿՆԵՐ

Երկիրը մարդուն ձրի չի կերակրում։ Քաջ պէտք է չարչարուի երկրագործը, շատ քրտինք պէտք է թափէ, որ առատ հաց ստանայ։ Գիւղացին արօրով ու գութանով վարում է հողը, ցաքանով ցաքանում և յետոյ

զանազան բոյսեր է ցանում։ Արտերում նա ցանում է հացաբոյսեր, բանջարանոցներում—շատ բանջարեղէններ, իսկ պարտէզներում—զեղեցիկ ծաղիկներ։

Հացաբոյսեր։—Ցորեն, գարի, հաճար, վարսակ, բրինձ, կորեկ։
Բանջարեղէններ։—Դեղնախնձոր, գազար, սոխ, կաղամբ, սիսեռ, բոզկ, վարունգ...
Ծաղիկներ։—Վարդ, շուշան, կակաչ, մեխակ, անթառամ, մանուշակ, ձնծաղիկ։

---

36. ՄԱՆՈՒՇԱԿ

Կապոյտ գլխով, կանաչ ոտով
Ես ծաղիկ եմ անուշ հոտով.
Թէև տունկս փոքրիկ է, ցած,
Արօտներում միշտ թաք կացած,
Բայց իմ փունջս ամենի տան՝
Թէ աղքատի, թէ մեծատան,
Իբրև գարնան առաջին զարդ,
Կարէ տեսնել ամեն մի մարդ.
Ես եմ սիրուն գարնան դուշակ.
Իմ անունս է մանուշակ։

57. ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՆ ՈՒ ԹՁՆ ՄԻՆԵՐԸ

Մարդիկ շատ թշնամիներ ունին գազանների, թռչունների և միջատների մէջ։ Գիշատիչ գազաններն ու թռչունները յարձակւում են մեր ընտանի կենդանիների և թռչունների վրայ։ Շատ միջատներ ահագին վնաս են հասցնում մեր դաշտերին, անտառներին, այգիներին և բանջարանոցներին։ Սակայն մենք բազմաթիւ բարեկամներ էլ ունինք կենդանիների մէջ։ Շատ փոքրիկ գազաններ և թռչուններ ոչնչացնում են վնասակար միջատներին. մեղուները մեզ քաղցր մեղր և մեղրամոմ են տալիս, իսկ շերամը մետաքս է պատրաստում։

Մեր բարեկամները։—Խլուրդ, ոզնի, ագռաւ, ծիծեռնակ, գորտ, մեղու, շերամ, սարեակ, կոցար։
Մեր թշնամիները։—Գայլ, արջ, աղուէս, մուկ, բաղէ, ցին, թեթեռ, մորեխ։

---

58. ՀԱՆՔԵՐ

Մարդիկ երկրից զանազան մետաղներ են ձեռք բերում—ոսկի, արծաթ, երկաթ, պղինձ, արճիճ։ Մետաղներից շինում են շատ առարկաներ՝ բահ, խոփ, սղոց, կացին, ուրագ, օղեր, մատանիներ։ Երկրի մէջ կան և բազմաթիւ հասարակ ու թանկագին քարեր։ Հասարակ քարերը մարդիկ գործ են ածում շինու-

թիւնների համար, իսկ թանկագին քարերը—զարդարանքների։

Մետաղներ։—Ոսկի, արծաթ, պղատին, պղինձ, երկաթ, պողպատ, արճիճ, կապար։

Հասարակ և թանկագին քարեր։—Որձաքար, չեչաքար, կայծաքար, կրաքար, աղքար, աղաժանդ, զմրուխտ, յակինթ։

ԳՐՈՒՄՈՐ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

28. Արտագրեցէք և յ տառի տակ գիծ քաշեցէք։

Ես մի քահանայ տեսայ։ Այս երեկոյ ընկերս կըգայ։ Էսօրուայ գործը վաղուան մի՛ թողնիր։ Ամառուայ փուշը—ձմեռուայ նուշն է։ Մինչեւ տղան չլայ, մայրը նրան ծիծ չի տայ։

29. Արտագրեցէք այս բառերը։

Ասա՛։ Գնա՛։ Արա՛։ Կարդա՛։ Խաղա՛։—Աննա։ Եղիա։ Երեմիա։ Ովսաննա։ Իտալիա։—Սա։ Դա։ Նա։ Ահա։ Այո։ Քո։

30. Լրացրէք այս վարժութիւնը։

Գարին հացաբոյս է, իսկ ոսկին... Շուշանը ծաղիկ է, իսկ ատամանդը... Կիտրոնը պտուղ է, իսկ վարունգը... Կակաչը ծաղիկ է, իսկ չեչաքարը... Թզենին պտղատու ծառ է, իսկ ուռենին... Ծիծեռնակը մարդուն բարեկամ է, իսկ մորեխը...

---

59. ՈՍԿԻՆ ԵՒ ԵՐԿԱԹԸ

Մի անգամ ոսկին ու երկաթը վիճում էին միմեանց հետ։

—Ես ամենից լաւ մետաղն եմ,—ասում էր ոսկին.—ամենքը սիրում են ինձ և լաւ պատիւ են տալիս։ Մարդկանց համար ես փող էլ եմ, զարդարանք էլ. ինձանից, ինչ ասես, շինում են՝ սիրուն շղթաներ, թանկագին մանեակներ, մատանիներ, օղեր. էհ, էլ ինչ երկարացնեմ, եթէ ուզենամ, ամբողջ աշխարհը կըգնեմ։

—Շատ ես պարծենում, ոսկի՛ տղա,—պատասխանեց երկաթը.—ճշմարիտ է, մարդիկ քեզ շատ երես են տալիս, բայց մենակ դու չես աշխարհիս տէրը։ Եթէ մարդ ուզում է ապահով ապրել, նրան երկաթ էլ է հարկաւոր. տուն շինելու համար ոսկէ կացնով չեն կտրում փայտը. հաց ունենալու համար ոսկէ արօրով չեն վարում հողը. գազաններից պաշտպանուելու համար ոսկէ հրացան չեն բանեցնում։ Եթէ դու, ոսկի՛ աղա, կարող ես աշխարհը գնել, ես էլ, լաւ գիտենաս, կարող եմ բոլորը ձեռքիցդ խլել։

Առածներ։—Ոսկին պատիկ է, բայց գինը մեծ է։—Երկաթը տաք-տաք կըծեծեն։

---

60. ՋՈՒՐ

I.

Ջուրը լինում է ջրհորներում, աղբիւրներում, լճերում և ծովերում. նա մեզ հարկաւոր է խմելու, կերակուր պատրաստելու և զանազան բաներ լուանալու համար։ Ջուրը պտրտացնում է ջրաղացի անիւները։ Ջրով հանգցնում են կրակը, ջրում են պարտէզները,

այգիները, բանջարանոցներն ու արտերը։ Գետերի, լճերի և ծովերի մէջ ապրում են ձկներ, գորտեր և ուրիշ շատ կենդանիներ։ Սագերը, բադերն ու կարապներն էլ սիրում են լող տալ ջրի երեսին։

II.

Ձմեռ ժամանակ ջուրը սառչում, սառոյց է դառնում։ Անձրևի տեղ ձմեռը ձիւն է գալիս։ Ձիւնն ու սառոյցը գարնանը հալւում են և ջուրը հոսում է դէպի գետերն ու լճերը։ Տաքութիւնից ջուրը եռում, գոլոշի է դառնում։ Անձրևը շատ հարկաւոր է ծառերի, թփերի, խոտերի և ուրիշ բոյսերի համար։ Առանց ջրի բոյսերը կըչորանան։

61. ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄԻՆԸ

Մարդու մարմնի մասերն են՝ գլուխը, պարանոցը, բունը, ձեռքերը և ոտքերը։ Ձեռքերով մենք աշխատում ենք, իսկ ոտքերով ման ենք գալիս։ Մարդը պէտք է կերակրուի, որ նրա մարմինը առողջ և ուժեղ լինի։ Կերակուրը մարսւում է ստամոքսի մէջ։

Մարմնի մասերը։—Գլուխ, պարանոց, բուն, ձեռքեր, ոտքեր։
Գլխի մասերը։—Գանգ, ճակատ, քիմքեր, յօնքեր, կոպեր, աչքեր, ականջներ, այտեր, քիթ, շրթունքներ, բերան, կզակ։
Բնի մասերը։—Կուրծք, փոր, կողեր, մէջք։
Ձեռքի (թևի) մասերը։—Ուս, արմունկ, դաստակ։
Ոտքի մասերը։—Ազդր, սրունք, գարշապար։

62. ՀԻՆԳ ԶԳԱՅԱՐԱՆՔ

Մենք աչքով տեսնում ենք, ականջով լսում, քթով հոտ քաշում, լեզուով համն իմանում, իսկ մատներով շօշափում ենք և իմանում, թէ առարկան պինդ է թէ փափուկ, սառը թէ տաք, հարթ թէ անհարթ։

Աչքը տեսողութեան զգայարանքն է, ականջը—լսողութեան, քիթը—հոտառութեան, լեզուն—ճաշակելիքի, իսկ մատները և ամբողջ մարմինը—շօշափողութեան։

63. ԳԱՐՈՒՆ

Ջերմիկ փայլեց արեգակը,
Դարձաւ մեզ մօտ ծիծեռնակը,
Աչքը բացեց մանուշակը,
Հասաւ գարնան եղանակը։

Մեղուն թռաւ իւր փեթակից
Ժողուել մեղր ծաղիկներից.
Մրջնիկները խումբ-խումբ, շարքով,
Աշխատում են ժիր ու կարգով։

Ամպը թնդաց գոռգոռալով,
Ցիթ-ցիթ անձրև ծործորալով.
Դաշտն ու պարտէզ զուարթացան.
Ահա կապեց և ծիածան։

Օրհնած լինի գալդ, գարուն,
Դու եղանակ անուշ, սիրուն,
Ձուտով բեր մեզ ուրախ զատիկ,
Ժիր գառնուկներ, կարմիր ձուիկ։

64. ՕՐԵՐ, ԱՄԻՍՆԵՐ ԵՒ ՏԱՐՈՒԱՅ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Շաբաթն ունի եօթն օր—երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ և կիւրակի։ Օրերից կազմւում են ամիսներ, ամիսներից—տարիներ։ Տարին ունի տասներկու ամիս—յունուար, փետրուար, մարտ, ապրիլ, մայիս, յունիս, յու-

լիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր։

Մարտը, ապրիլը, մայիսը—գարնան ամիսներ են, յունիսը, յուլիսը, օգոստոսը—ամրան, սեպտեմբերը, հոկտեմբերը, նոյեմբերը—աշնան, իսկ դեկտեմբերը, յունուարը և փետրուարը—ձմրան։

Գարունը, ամառը, աշունը և ձմեռը տարուայ չորս եղանակներն են։

ԳՐԱՒՈՐ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

31. Արտագրեցէք և ուր որ հարկաւոր է յ աւելացրէք։

Աննա՛, գնա՛, հայրիկին ասա՛, որ գա ինձ մօտ։ Ահա քո տետրակը, Եղիա։ Գինովաքէ՛, մայրդ կըգա՞ այգի։—Այո, պատասխանեց նա։ Ճաշից յետոյ մի տղա կառքի տակ ընկաւ. ես մօտեցա, վեր առա եւ տարա տուն։

32. Գրեցէք և աւելացրէք պակաս տառերը։

Ոչխարն+ըի հ+տն արածում է ծաղկաւ+տ դաշտում։ Ատ+ած պատժում է շար+ին։ Ո+ որ կարդա+, +ետո+ լաւ մարդ կըդառնա+։ Կա+ից ըրուտը աման է շինում։ Արամ, գիրքդ ընկա+։ Այս+ը անձր+ է գալիս։ Այս երեկո+, թէ+ից յետո+ մեր Սուր+նը նամակ պիտի գր+ հ+ը։

33. Լրացրէք հետեւեալ վարժութիւնը։

Արծիծը մետաղ է, իսկ գլուխը... Կուրծքը ընի մասն է, իսկ ականջը... Ցունուարը ամիսի անուն է, իսկ երկուշաբթին... Բունը մարմնի մասն է, իսկ գարունը...

34. Գրեցէք քանի զգայարանք ունի մարդը և ո՞րոնք են նրանք։

35. Գրեցէք առանձին-առանձին օրերի, ամիսների և տարուայ եղանակների անունները։

---

65. ՉՈՐՍ ԵՂԱՆԱԿ

Ձիւնը հալւում է, խոտը կանաչում, ծառերը ծաղկում, օրը երկարում։ Այս ե՞րբ է լինում։

Ամիսներ անցան. օրերը տաքացան, ամպերը բարձրացան, անձրև թափեցին։ Արտերն հասել են, հընձող են կանչում։ Այս ե՞րբ է լինում։

Մարդիկ դուրս եկան, այգին քաղեցին։ Օրը կարճացաւ, հունձը վերջացաւ, բարակ անձրևը բարձրից է մաղւում և մութ գիշերը չորս կողմդ բռնում։ Այս ե՞րբ է լինում։

Դաշտ ու ձոր ահա ձիւնով ծածկուեցան, ծառերից սառցէ շիթեր կախուեցան։ Մարդիկ քաշուեցան իրանց տները, իսկ գազանները իրանց բները։ Դուրսը ցուրտ քամին փչում է, փչում և ձիւնի թեփով աչքերդ լցնում։ Այս ե՞րբ է լինում։

---

66. ՄԱՂԹԱՆՔ ՄԱՆԿԱԿԱՆ

Արի՛ դու, արի՛,
Քո գալդ բարի,
Սիրուն նոր տարի,
Նոր օրեր բեր մեզ։

Ձիւն տուր սարերին,
Անձրև՝ արտերին,
Կարկուտը՝ չարին,
Զով արևը՝ մեզ։

Անթուփ ծաղիկից,
Աններկ կարմրուկից,
Բարի ցաւերից
Ազատ պահիր մեզ։

Մայրական գթով,
Գրկաբաց ձեռքով,
Քաղցր ժպիտով
Ա՛ռ քո գիրկը մեզ։

67. ՁՈՐՍ ՅԱՆԿՈՒԹԻՒՆ

1.

Ձմեռն էր։ Աշոտը խաղում ու սահում էր սառույցի վրայ։ Բաւական խաղալուց յետոյ՝ նա ուրախ-ուրախ, կարմրած թշերով վազեց տուն և ասաց հօրը.

—Ա՜խ, հայրիկ, ինչ պատուական եղանակ է ձմեռը։ Ես կըցանկանայի, որ միշտ ձմեռ լինէր։

Հայրը հանեց իւր ծոցի տետրակը և նրա մէջ նշանակեց Աշոտի այս խօսքերը։

2.

Եկաւ գարունը։ Աշոտը դուրս գնաց դաշտը, ծաղիկներ քաղեց, թիթեռներ բռնեց և յետոյ վազելով հօր մօտ՝ ասաց.

—Ի՜նչ գեղեցիկ է գարունը։ Ես կըցանկանայի, որ միշտ գարուն լինէր։

—Հայրն Աշոտի այս ցանկութիւնն էլ նշանակեց իւր տետրակում։

3.

Հասաւ ամառը։ Աշոտը իւր հօր հետ հնձի գնաց։ Ամբողջ օրը մանուկը խաղում, զուարճանում էր—ձուկն էր որսում գետակից, ծաղիկներ հաւաքում և գլուխը հոտաւէտ խոտերի մէջ. երեկոյեան նա ասաց հօրը.

—Ա՜խ, հայրիկ, երանի թէ ամառը վերջ չունենար։

Աշոտի այս խօսքերն էլ գրուեցան նոյն տետրակի մէջ։

4.

Վերջապէս եկաւ աշունը։ Այգիներում սկսեցին պտուղներ ժողովել։ Աշոտն ուրախ-զուարթ դէս ու դէն էր վազում, ամեն պտղից էլ անուշ անում. վերջը մօտեցաւ հօրը և ասաց.

—Աշունը տարուայ բոլոր եղանակներից ամենալաւն է։

Այն ժամանակ հայրը բաց արեց իւր ծոցի տետրակը և ցոյց տուեց Աշոտին, որ նա գարնան, ձմրան և ամառուան մասին էլ միևնոյնն է ասել։

Առածներ։—Գարնան զառն է զովելի, աշնան հաւը։- Ամառուայ փուշը՝ ձմեռուայ նուշն է։—Գառը գարնան, ձիւնը ձմրան։

---

68. ՅՂԱՅՈՅ ԱՂՕԹՔ

Հայը մեր երկնաւոր, Հայը ամեն մարդի,
Դու ինձ ամեն օր տաս հացար բարի—
Կեանք, լոյս, կերակուր, հայր և քաղցրիկ մայր,
Մեծ ու փոքրիկ բոյր, անուշիկ եղբայր։
Իսկ ես ինչ ունիմ, որ ինչ տամ քեզի.
Առջևդ կընկնեմ, կենամ աղօթքի.
«Ընորհդ տուր ինձ, որ ծնողներիս,
Ուսուցիչներիս և իմ մեծերիս
Լինիմ սիրելի, իսկ Քեզ հաճելի»։

---

69. ՀԵՔԻԱԹ

1.

Ժամանակով մարդու մէկը մի էշ ունէր, որը երկար տարիներ ծառայել էր նրան, իսկ այժմ ծերացել, այժից բոլորովին ընկել էր. դրա համար տէրը նրան վատ էր կերակրում և ուզում էր սպանել, կաշին հանել։ Էշը հասկացաւ այս և մի օր գլուխն առաւ, փախաւ-գնաց։

Գնաց-գնաց, ճանապարհին պատահեց մի որսկան շան։ Խեղճ շունն այնպէս հեւում էր, որ քիչ էր մնում՝ շունչը կտրուի։

—Ինչու՞ ես այդպէս հեւում, շո՛ւն եղբայր,—հարցրեց մեր էշը։

—Ա՛խ,—պատասխանեց շունը.—ես ծերացել եմ և էլ որսի գնալ չեմ կարող. դրա համար իմ տէրն ուզում էր ինձ սպանել. ես էլ գլուխս առայ, փախայ նրա մօտից։ Բայց չգիտեմ, թէ ինչպէս պէտք է հաց ճարեմ։

—Գիտես, ինչ կայ,—ասաց էշը,—ես գնում եմ այս մօտիկ քաղաքը երգիչ դառնալու։ Արի՛, ինձ հետ ընկերացիր, միասին գնանք։ Ես կերերեմ, դու էլ թմբուկ կըխփես։

Շունը համաձայնուեցաւ և երկուսը միասին գնացին։

2.

Գատ գնացին, թէ քիչ, պատահեցին մի կատուի։

—Բարև, փիսիկ, ինչու՞ այդպէս տխուր ես.—հարցրեց էշը։

—Ի՞նչպէս կարող եմ ես ուրախ լինել, սիրելի էշ,—լալագին պատասխանեց կատուն.—տեսնում ես, ես ծերացել եմ, բոլոր ատամներս թափուել են և էլ չեմ կարող մուկը որսալ, դրա համար իմ տիրուհին ուզում էր վզիցս մի քար կապել, ջուրը գցել, որ խեղդուեմ։ Ասենք՝ այդ փորձանքից պրծայ, փախայ, բայց չգիտեմ, ո՞ւր գնամ, ինչ անեմ։

—Երկուս չլինինք, երեք լինինք,—ասաց էշը,—արի, գընանք այս մօտիկ քաղաքը երգիչ դառնալու։

Կատուն համաձայնուեցաւ և երեքը միասին շարունակեցին ճանապարհը։

3.

Գնացին, գնացին, պատահեցին մի աքաղաղի, որը դռան առաջ կանգնած՝ որքան ոյժ ունէր, կանչում էր։

—Ինչո՞ւ ես այդպէս աղաղակում, աքաղաղ եղբայր,—հարցրեց էշը,—ինչ է պատահել քեզ։

—Էլ ինչ պիտի լինի,—պատասխանեց աքաղաղը.—վաղը իմ տիրոջ տօնն է, շատ հիւրեր են կանչուած։ Այդ պատճառով տանտիկինը հրամայեց, որ ինձ մորթեն, վաղուան համար կերակուր պատրաստեն։

—Մի վշտանար,—ասաց էշը.—երեք չլինինք, չորս լինինք դու լաւ ձայն ունիս. արի մեզ հետ, գնանք, դու էլ երգիչ դարձիր։

Աքաղաղն էլ համաձայնուեցաւ և նրանք բոլորը միասին ճանապարհ ընկան։

4.

Շատ գնացին թէ քիչ, իրիկնապահին հասան մի անտառ և վճռեցին գիշերն այնտեղ անցկացնել։ Էշն ու շունը պառկեցին մի մեծ ծառի տակ, կատուն բարձրացաւ, նստեց ճիւղի վրայ, իսկ աքաղաղը ծառի գագաթին թառեց։ Այստեղից նա չորս կողմը նայեց, տեսաւ, որ հեռուից մի լոյս է երևում։

—Այստեղից ո՛չ հեռու կարծեմ մի տուն կայ,—կանչեց նա ընկերներին։

—Վեր կացէք, գնանք այնտեղ, էլի մի բան կըգտնենք ուտելու, թէ չէ այստեղ շատ վատ է,—ասաց էշը։

5.

Բոլորը վեր կացան և ճանապարհ ընկան դէպի այն կողմը, որտեղից լոյս էր երևում։ Շուտով նրանք հասան մի տան, որտեղ քառասուն աւազակ էին բնակւում։ Էշն ամենից մեծն էր. նա գնաց, պատուհանից նայեց, որ տեսնի, թէ ներսն ինչ կայ։ Երբ վերադարձաւ, աքաղաղը հարցրեց.

—Ի՞նչ կայ, ինչ չկայ այնտեղ։

—Էլ ինչ պիտի լինի,—պատասխանեց էշը,—տան մէջտեղը մի մեծ սեղան է բաց արած, վրան լաւ-լաւ կերակուրներ ու խմիչքներ դրած, չորս կողմը քառասուն աւազակ նստած՝ ուտում-խմում են։

Կերակուրների անունը որ լսեցին, բոլորի բերանի ջուրը հոսաց։ Աքաղաղն ասաց.

—Ի՞նչ լաւ կըլինէր, որ այդ բոլորը մեր առաջ շարուած լինէր։

—Այո՛,—հառաչեց էշը.—գոնէ մի քիչ փորերս կըկշտացնէինք։

Նրանք սկսեցին խորհուրդ անել, թէ ինչպէս անեն, որ աւազակներին այդտեղից փախցնեն։ Մտածեցին, մտածեցին և վերջապէս վճռեցին, որ էշը բարձրանայ, կանգնի պատուհանի առաջ, շունը նստի նրա մէջքին, կատուն բարձրանայ շան վրայ, իսկ աքաղաղը թռչի, նստի կատուի գլխին։

6.

Ինչպէս որ վճռեցին, այնպէս էլ արին։ Յետոյ բոլորը միասին սկսեցին աղաղակել։ Էշը գոռում էր, շունը հաչում, կատուն յաւում, իսկ աքաղաղը կանչում։ Յանկարծ պատուհանը փշրուեց և բոլորը միասին ներս գլորուեցին։ Աւազակները կարծեցին, թէ եկել են իրանց բռնելու, սարսափած թողին տուն ու տեղ, փախան դէպի անտառ։ Չորս ընկերների ուզածն էլ հէնց այդ էր. նրանք իսկոյն նստեցին և այնքան կերան, որ կարծես մի ամիս ոչինչ չէին կերել։

Երբ լաւ կերան-կշտացան, ճրագը հանգցրին և պառկեցին քնելու։ Էշը պառկեց բացում, աղբի վրայ, շունը դռան յետևը, կատուն վառարանի մօտ, իսկ աքաղաղը բարձրացաւ, նստեց դռան վրայ, և երբ ճանապարհ գնալուց յոգնած լինելով, շուտով բոլորն էլ քնեցին։

7.

Կէս գիշերին, երբ հեռուից աւազակապետը տեսաւ, որ տանն մարդ կրակ չկայ և ո՛չ մի ձայն չի լսում, ասաց աւազակներից մէկին.

—Գնա՛, տես, թէ ինչ կայ մեր տանը։

Աւազակը գնաց, տեսաւ, որ ձայն-ծպտուն չկայ, ներս մտաւ և ուզում էր ճրագ վառել։ Մութ սենեակում կատուի աչքերը պըսպղում էին. նա կարծեց, թէ լուցկի է, մօտեցաւ, որ վեր առնի, բայց կատուն յանկարծ թռաւ նրա երեսին և մի լաւ ճանկռոտեց։ Աւազակը սաստիկ վախեցաւ և ուզեց փախչել, բայց շունը, որ դռան մօտ պարկած էր, վրայ հասաւ և ոտը կծեց։ Երբ նա ուզում էր բազի միջով փախչել, էշը իւրյատին ոտներով մի սարսափելի աքացի տուեց նրան, իսկ աքաղաղը, որ այդ աղմուկից արթնացել էր, դռան վրայից կանչեց՝ «ծուղրուղո՛ւ»։

8.

Վերջապէս աւազակը մի կերպ դուրս պրծաւ և վազելով գընաց աւազակապետի մօտ և ասաց.

—Օ՜հ, մեր տանը մի սատանայ կայ նստած. նա երեսս ճանկռոտեց. դռան առաջ կանգնած էր մի մարդ, ձեռքին մի դանակ բռնած, նա ոտս ծակեց։ Բազումը պարկած է մի մեծ գև. նա երկու հաստ գաւազանով այնպէս խփեց ինձ, որ քիչ մնաց՝ տեղս մնայի։ Իսկ կտուրը նստած է մի դատաւոր, որ կանչում էր. «բռնեցէք, ինձ մօտ բերէք այդ աւազակին»։ Հազիւ փախայ և ազատուեցի։

Աւազակներն էլ սիրտ չարին վերադառնալ։ Նրանք թողին իրանց տունը և հեռացան, ուրիշ աշխարհ գնացին։ Իսկ մեր երգիչներին այնքան դուր եկաւ այս տունը, որ վճռեցին միշտ այստեղ ապրել։

---

70. ՄԱՆՈՒԿՆԵՐՆ ՈՒ ՁԱԳՈՒԿԸ

(Մանկական խաղ)

Մանուկները։

Սիրուն ձագուկ, չունիս մայրիկ և կամ հայրիկ,
Որ թռչում ես ոլոր-մոլոր մեր չորս բոլոր։

Ձագուկ։

Ուրուրն այսօր տարաւ իմ մօր։

Մանուկները։

Ձագիկ, մի՛ լար, որբիկ, մի՛ լար,
Դու չես մնալ անտէր, անմայր։

Եկէք, բոյրեր ու եղբայրներ,
Ընկնենք սարեր ու անտառներ,
Գնանք-գտնենք, խնդրենք մէկին,
Որ մայր դառնայ այս խեղճ ձագին։

Սիրո՛ւն հաւքեր, երկնից հաւքեր,
Առէք ձեզ հետ ձագին անտէր։

Կկու։

Կո՛ւկ—կո՛ւ, կո՛ւկ—կո՛ւ...

Մանուկները։

Չէ՛, չէ՛, կկո՛ւ, այլոց ընում
Ձու ես դնում, մայր չես դառնում։

Ագռաւ։

Գռա՛, գռա՛, գռա՛...

Մանուկները։

Չէ՛, չէ՛, ագռա՛ւ, գող, գիշակեր,
Քեզ չենք յանձնիլ, մի՛ կռայեր։

Կռունկ

Կ՚ըռ, կ՚ըռ, կ՚ըռ...

Մանուկները։

Չէ՛, չէ՛, կռո՛ւնկ դարնանասէր,
Մեր երկիրներ կայ ցուրտ ձմեռ։

Տատրակ։

Վո՛ւ, վո՛ւ, վո՛ւ...

Մանուկները։

Չէ, չէ, տատրակ, գիտենք, լաւ ես,
Աղնիւ հաւ ես, բայց լալկան ես։

Ձագի մայրը։

Մարդն ուրուրին սպանեց,
Ինձ ճանկերից ազատեց.
Տուէք ձագս, խնդրում եմ,
Ո՞վ է գտել, փնտրում եմ։

Մանուկները։

Առ, առ, մայրիկ,
Քո խեղճ ձագիկ,
Սիրուն ծըտիկ,
Որ չթռչի
Ոլոր—մոլոր
Մեր չորս բոլոր։

Ձագուկ, ձագուկ, ուրախ կաց,
Մօրդ գնա գրկաբաց,
Հետը թռիր, հեռացիր,
Անցած ցաւդ մոռացիր։

Ձագը մօրը սիրում է,
Առանց նրան տխրում է,
Երբ որ նրան գտնում է,
Ուրախ ճչում, ճխխում է։

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐ. ԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ԱՍՍՍ ԳԱ-ի ՄԵՆԱՐԱՆ

«Ազգային գրադարան»
NL0247539

7934